ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՈՐՔ ԵՎ ԱՆԱՊԱՍՏԱՆ ՀԱՅ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

ԷԴՈՒԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ

XIX դ. վերջերից սկսած և մասնավորապես առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայ ժողովրդի արևմտյան հատվածի դրությունը ավելի ծանրացավ։ 1914—1915 թթ. Թուրքական իշխանություններն իրականացրին վաղօրոք մշակված իրենց հրեշավոր պլանները՝ մասսայաբար բնաջնջելով արևմտահայությանը։ Օսմանյան կառավարության բռնակալական քաղաքականությունը բխում էր ռասայական խտրականությունից, Թուրքիայում ապրող այլազգիների վրա իրենց հեգեմոնիստական տիրապետությունը հաստատելու ձգտումներից։ Ամենից շատ և անասելի չափերով տուժեցին հայերը։ 1915 թ. ամայացավ ողջ Արևմտահայաստանը, սրի քաշվեց մեր ժողովրդի մի հսկայական զանգվածը։ Կենդանի մնացածները բռնեցին գաղթի ճանապարհը՝ դեպի Արևելյան Հայաստան ու ռուսական հյուրընկալ հողը։ Արևմտահայության զգալի մասը քշվեց արաբական անապատները։ Սակայն այստեղ էլ անօթևան մնացած բազմահազար աքսորյալները հանգիստ չունեին։ Թուրքիայի ներքին գործերի մինիստր Թալեաթը Հալեպի և հարևան շրջանների կուսակալներից շարունակ պահանջում էր բոլոր միջոցներով ոչնչացնել Հալեպում և հարևան շրջաններում ապաստանած հայերին[1]։ Համեմատաբար բարվոք էր Արևելյան Հայաստանի, Ռուսաստանի և Անդրկովկասի հայաշատ վայրերը գաղթած արևմտահայության կյանքի ու ֆիզիկական գոյության ապահովությունը։ Սովետական Հայաստանում և Ռուսաստանի գաղթօջախներում ապաստանած հարյուր-հազարավոր հայերի համար ոչ միայն ապրելու, այլև հոգևոր վերածննդի լայն հնարավորություններ ստեղծվեցին։

Գաղթական արևմտահայության հոծ զանգվածները բնակություն հաստատեցին Էջմիածնում, Ղամարլուում, Սարդարապատում, Աշտարակում, Երևանում, Ալեքսանդրապոլում և Անդրկովկասի ու Ռուսաստանի հայկական գաղթօջախներում՝ Թբիլիսիում, Բաթումում, Յալթայում, Արմավիրում, Աբխազիայում, Հյուսիսային Կովկասում և այլուր։ Գաղթական հայերին, մասնավորապես տարափոխիկ հիվանդություններով վարակված, հյուծախտից տառապող հարյուր-հազարավոր անչափահասներին օգնության ձեռք մեկնեց նորաստեղծ Սովետական Ռուսաստանի կառավարությունը, անձամբ Վ. Ի. Լենինը։ Պրոլետարիատի առաջնորդը հայ գաղթականների փրկության և

---

[1] Ջ. Ս. Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը, Երևան, 1967, էջ 385—391։

նրանց նյութական ապահովության գործը համարում էր պետական ու քաղաքական նշանակություն ունեցող կարևոր խնդիր։ Այդ նպատակով Սովետական Ռուսաստանի կառավարությունը 1917 թ. դեկտեմբերին ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատի կազմում ստեղծեց Հայկական գործերի կոմիսարիատ, որի կոմիսար նշանակվեց պետական ականավոր գործիչ Վ. Ավանեսովը, իսկ տեղակալ՝ հայ մեծատաղանդ բանաստեղծ Վ. Տերյանը։

Դժվարին խնդիր էր տասնյակ ու տասնյակ հազարավոր որբ ու անօթևան անչափահասներին ֆիզիկական կործանումից փրկելու և դաստիարակելու գործը։ Հեշտ չէր այդ խնդրի իրականացումը մասնավորապես Հայաստանում սովետական կարգերի հաստատման օրերին և 1921—1922 թթ., երբ սովետական իշխանությունը ժառանգել էր լիակատար քայքայված տնտեսություն, տասնյակ ու հարյուր-հազարավոր սովալլուկ որբեր։ Անհրաժեշտ էր անհապաղ հավաքագրել կյանքի շիտակ ուղուց շեղված անչափահասներին, նրանց տեղավորել մանկական հիմնարկներում՝ միաժամանակ կազմակերպելով նրանց ուսման ու դաստիարակության գործը։ Այդ գործում Հայաստանի կառավարությանը մեծ աջակցություն և օգնություն ցույց տվեց Սովետական Ռուսաստանի կառավարությունը։ Հաշվի առնելով Հյուսիսային Կովկասում, Դոնեցկի ավազանում, Պովոլժիեում, Ղրիմում, Աստրախանում, Արմավիրում, Կրասնոդարում, Դոնի Ռոստովում ու նրա մերձակայքում, ինչպես նաև Ուկրաինայի ու Միջին Ասիայի մի շարք բնակավայրերում ապաստան գտած գաղթական հայերի տնտեսական ծանր դրությունը, Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ Հայկական գործերի կոմիսար Վ. Ավանեսովը ՌՍՖՍՀ ժողկոմխորհին միջնորդագիր է ներկայացնում Արևմտյան Հայաստանից փախած հայ գաղթականներին նյութական օգնություն ցույց տալու մասին։ Ժողկոմխորհի նիստում հայ գաղթականներին վեց միլիոն ռուբլի օգնություն տրամադրելու մասին Վ. Ի. Լենինի առաջարկությունն ընդունվում է մեծ խանդավառությամբ[2]։ Ժողկոմխորհը միաժամանակ հանձնարարում է Վ. Ավանեսովին՝ պետական պատշաճ հսկողությամբ հետևելու, որպեսզի այդ գումարը ծառայի որբ ու անապաստան անչափահասների հավաքագրման, տեղավորման և նրանց ուսման ու կրթության նպատակին։

1918 թ. հունիսի 28-ին Հայկական գործերի կոմիսարի տեղակալ Վ. Տերյանը Վ. Ի. Լենինի հանձնարարականով մեկնում է Հյուսիսային Կովկաս՝ իր հետ տանելով երկրամասում ապաստան գտած հայ գաղթականներին Սովետական Ռուսաստանի կողմից հատկացված երկու միլիոն ռուբլի դրամը, մեծ քանակությամբ հագուստ, դեղորայք, գրականություն, ուսումնա-գրենական պիտույքներ և այլն։ Վ. Տերյանի անմիջական օգնությամբ ու նրա ցուցումներով 1919—1920 թթ. Ռուսաստանի, Ուկրաինայի, Միջին Ասիայի և Հյուսիսային Կովկասի հայ գաղթօջախներում բացվում են դպրոցներ, մանկատներ, արհեստագործական ուսումնարաններ, հավաքագրվում են մի քանի հարյուր անապաստան որբ պատանիներ ու աղջիկներ, որոնք տեղավորվում են նոր կազմակերպված մանկական հիմնարկներում և դպրոցներում։

---

2 Ս. Ալիխանյան, Վահան Տերյանի պետական գործունեությունը, Երևան, 1956, էջ 129—131։

1919—1921 թթ. ընթացքում կազմակերպվում են նաև մի շարք մանկական աշխատանքային-դաստիարակչական գաղութներ, որտեղ տեղավորվում և դաստիարակվում են ծնողական հոգացողությունից զրկված և գրեթե օրինազանց դարձած հարյուրավոր պատանիներ ու աղջիկներ[3]։ Ըստ ամենայնի բարձր դնահատելով Ռուսաստանի սովետական կառավարության և անձամբ Վ. Ի. Լենինի հոգատարությունը, Ռուսաստանի գաղթօջախներում ապաստան գտած հայերը ողջույնի հեռագիր են ուղարկում պրոլետարիատի մեծ առաջնորդին՝ արտահայտելով իրենց երախտագիտությունը։ Հայաստանում սովետական կարգերի հաստատման առթիվ 1920 թ. նոյեմբերի 30-ին առաջնորդին նույնպիսի հեռագիր են հղում նաև էջմիածնում ապաստանած հայ գաղթականները։ Վ. Ի. Լենինին երախտիքի խոսքեր հղելուց բացի, նրանք բուռն ցանկություն էին հայտնում, որ Հայաստանի և Ռուսաստանի խորհրդային հանրապետությունների միջև տնտեսական և մշակութային կապեր հաստատվեն ու ամրապնդվեն[4]։ Ռուսաստանի սովետական կառավարությանը և անձամբ սիրելի առաջնորդ Վ. Ի. Լենինին իրենց երախտագիտության խոսքն էին ուղղում Սովետական Հայաստանի պատանի քաղաքացիները, որոնցից շատերը օթևանազուրկ որբեր էին, որ հրաշքով փրկվել և խարիսխ էին գցել Արևելյան Հայաստանում։ Ահա թե ինչ էին գրում Երևանի գավառի Վ. Ի. Լենինի անվան օղակի սաները՝ մեծ առաջնորդին ուղղված նամակում. «Թանկագին ուսուցիչ ընկեր Լենին, ուղարկում ենք այս երկտողը Ձեզ, նպատակ ունենալով նախ միմյանց հետ կապ հաստատելու և տեղեկանալու համար Ձեր դրության մասին, Ամենից շատ մեզ հետաքրքրում է Ձեր առողջությունը, որը մեզ համար հրատապ խնդիր է դարձել և որի մասին բոպե առ բոպե սպասում ենք, այսինքն՝ Ձեր վերջնական առողջության։ Դուք վստահ հավատացած եղեք մնացյալ հեղափոխական բոլոր գործերի համար, որ մենք Ձեզ համարում ենք մեր ամենաառաջնակարգ ուսուցիչ և մեր ամեն մի արած քայլը գծում ենք այն ուղիով, որով Դուք ժամանակի ընթացքում ընթացել եք՝ հերոսաբար մարտընչելով ամեն մի արգելքի դեմ։ Ու մեր արած քայլերը օրըստօրե ավելի տոկուն ու վստահ կերպով ենք կատարում՝ կանգ չառնելով ոչ մի խոչընդոտի առաջ։

Վստահ հավատացած եղեք նաև այն բանին, որ մենք մեր ժրաջան ու անդուլ աշխատանքով ապագայում կիրագործենք այն բոլոր վեհ և պանծալի գաղտումներն ու պարտականությունները, որ գրված են մեր վրա, և այդպիսով մենք կհասնենք մեր գաղափարների վերջնական իրագործմանը։

Վերջացնելով մեր փոքրիկ նամակը, ցանկանում ենք Ձեզ շուտափույթ առողջություն և երջանիկ օրեր՝ գալիք համաշխարհային հեղափոխությունը իրագործած տեսնելու և ղեկավարելու համար։

Սպասում ենք Ձեր շուտափույթ պատասխանին։

Թանկագին բարևներով Ձեր փոքրիկ և գիտակից ընկերներ։

2 նոյեմբերի 1923 թ., Երևան»[5]։

---

3 Վահան Տերյան, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1963, էջ 498—512։

4 ЦГАОР Арм. ССР, ф. 4/114, оп. 1, д. 35, л. 34 и ф. 40/113, оп. 3, д. 22, л. 108, 104.

5 Государственный музей революции Арм. ССР, Письмо Ленину от юнкомов звена имени Ленина Ереванского уезда 2/XI 1923 г., № 5639, инв. 22092.

Սովետական իշխանության հաստատման հենց առաջին օրվանից անապաստան ու փախստական որբերի կրթության ու դաստիարակության, նրանց առողջական վիճակը բարելավելու գործը հայտարարվում է համապետական նշանակություն ունեցող խնդիր, որի իրականացմամբ զբաղվում էին նաև Հանրապետության ներքին գործերի, սոցիալական ապահովության, առողջապահության ժողովրդական կոմիսարիատները, ինչպես նաև կուսակցական, սովետական և հասարակական կազմակերպություններն ու նրանց համապատասխան բաժինները։ Նախ որբերի առողջության վերականգնում, ապաստման ու կրթադաստիարակչական գործի բարելավում, քանի որ հյուծված, ֆիզիկապես քայքայված պատանիներն ու աղջիկները սովորել կարող էն միայն կազդուրվելուց, ուժերը վերականգնելուց հետո. ահա այս խնդրի իրականացմանն էին ուղղված 1922—1924 թթ. մանկական հիմնարկների մասին Սովետական Հայաստանի կառավարության ընդունած բազմաթիվ որոշումներն ու հրահանգները[6]։ Դրանց նպատակը մեկն էր՝ արմատապես բարելավել մանկական հիմնարկների և առաջին հերթին մանկատների աշխատանքը, քանի որ, ինչպես ասված էր Հանրապետության լուսժողկոմատի 1921 թ. մայիսի 1-ի զեկուցագրում, դրությունը աննախանձելի էր։ Այդ զեկուցագրում լուսժողկոմատի սոցդաստիարակության ենթաբաժնի վարիչ Պ. Հանեսօղլյանը գրում էր. «Նկատի ունենալով Հայհեղկոմի որոշումը, ըստ որի որբանոցների կրթական գործը վերապահվում է լուսժողկոմին, ես շրջելի էջմիածնի գավառի որբանոցները (Աշտարակում, Օշականում, Վաղարշապատում)։ Տեղեկությունները և տպավորությունները բերեցին այն եզրակացության, որ կրթադաստիարակչական գործը կարելի է դնել հնարավոր բարձրության վրա միայն այն դեպքում, երբ որբերի սննդառությունը և հագուստը, որբանոցների կահավորումը կբավարարեն առողջապահության ամենատարրական պահանջներին, այնինչ հենց այդ կողմով որբանոցները, մանավանդ վերջին պարենային կրիզիսի շնորհիվ, շատ են տուժում։ Ինձ հայտնեցին, որ վերջին օրերս սովի շնորհիվ որբանոցներում, մանավանդ էջմիածնում, սկսվել է որբերի մասսայական փախուստ։ Ուստի և դիմելով ձեզ, խնդրում եմ պարզել՝ հնարավոր չէ՞ արդյոք Հայհեղկոմում հարց հարուցել՝ որբանոցների կարիքները բավարարելու, առաջին հերթին համարելով այն հարվածային խնդիր»[7]։ Մանկական հիմնարկների գործունեության, անշափահաս որբերի ու անապաստանների կյանքի ապահովության, կրթադաստիարակչական գործի բարելավման վերաբերյալ ոչ մի ահազանգ անհետևանք չէր մնում։ ՀԿ(բ)Կ Կենտկոմը և Հայաստանի կառավարությունը 1923—1924 թթ. ավելի հետևողական միջոցառումներ են ձեռնարկում։ Այսպես, Հայաստանի ժողկոմխորհը 1923 թ. հուլիսի 5-ի որոշմամբ առողջապահության ժողկոմատին պարտավորեցնում է ձրի բժշկական օգնություն ցույց տալ մանկական հիմնարկներում տեղավորված հիվանդ երեխաներին։ Ժողկոմխորհի օգոստոսի 22-ի որոշման համաձայն մի շարք գերատեսչական շենքեր ազատվում և որպես հանրակացարան տրամադրվում են մանկատներին ու մանկական գաղութներին[8]։ Այս որոշումներն ու միջոցառումները մյուս կողմից էլ

---

6 ՀՍՍՀ ՀԱԿՊԱ, ֆ. 122, ց. 1, գ. 95, թ. 65—69, 74—79 և գ. 141, թ. 76։
7 Նույն տեղում, ֆ. 122, ց. 1, գ. 31, թ. 15։
8 Նույն տեղում, գ. 335, թ. 19։

նպատակ ունեին բարձրացնել պետական մանկատների հեղինակությունը, ավելացնել դրանց թիվը՝ նրանցում ընդգրկելով ավելի շատ կարիքավոր անչափահասներ։ Այդ նպատակով 1926—1927 թթ. Երևանից, Լենինականից և Էջմիածնից բացի նոր մանկատներ բացվեցին նաև Ղամարլուում, Հոկտեմբերյանում, Նոր Բայազետում, Դիլիջանում, Գորիսում և այլուր, ուր ամերիկյան որբանոցներից տեղափոխվում էին հարյուրավոր սաներ։

Սկսած 1926—1927 թթ. Սովետական Հայաստանում աստիճանաբար անտեսապես թուլանում են ամերիկյան որբանոցները և ավելի մեծ հեղինակություն են ձեռք բերում պետական մանկատները։ Գնալով ամրապնդվում էր վերջիններիս նյութատնտեսական բազան, ավելի էին կատարելագործվում դաստիարակչական աշխատանքի ձևերը, հարստանում էին լաբորատոր սարքավորումները։ Այդ պատճառով էլ հարյուրավոր պատանիներ ու աղջիկներ ամերիկյան որբանոցներից փախչում էին պետական մանկատներ՝ խնդրելով իրենց տեղավորել այնտեղ։

Թվում էր, թե թուրքական վանդալների սրից հրաշքով ազատված հազարավոր հայ որբերի կյանքը փրկված է։ Ճիշտ է, մոտ 10 հազար որբերի կյանքը, իրոք, փրկված էր, սակայն 1921—1922 թթ. այդքան որբեր էլ տակավին թափառում էին Հայաստանի գյուղերում ու քաղաքներում[9]։ Հարկավոր էր անհապաղ հավաքագրել նրանց, մինչև վերջին անօթևան ու անապաստան որբին տեղավորել մանկական որևէ հիմնարկում։ Բայց քանի որ Երևանում, Լենինականում և Էջմիածնում արդեն իսկ կազմակերպված էին մի քանի մանկատներ, մանկական այլ հիմնարկներ և այլևս հնարավոր չէր այդ վայրերում նորերի բացումը, ուստի հանրապետության կառավարությունը 1923 թ. հունիսի 24-ին որոշում է նոր մանկատներ, մանկական աշխատանքային գաղութներ ու գյուղատնտեսական կոմունաներ ստեղծել հատկապես հողագործական և անասնապահական շրջաններում՝ դրանց կից կազմակերպված արհեստանոցներին տալով գյուղատնտեսական թեքում՝ դյուղմեխանիզացիայի մասնագիտությամբ[10]։

Ինչպես Հայաստանի պետական և ամերիկյան մանկատներում, այնպես էլ արդարադատության ժողկոմատի սիստեմի աշխատանքային դաստիարակչական գաղութներում հասկանալի պատճառներով անհամեմատ դժվար էր աղջիկների դաստիարակության և աշխատանքային մասնագիտացման գործի կազմակերպումը։ Առանձին մանկական հիմնարկներին կից գործող կարի մանր արհեստանոցները, բնականաբար, չէին կարող բավարարել այդ շրջանում Հայաստանի տարածքում գտնվող մոտ 6000 անապաստան ու որբ աղջիկների մասնագիտացման և աշխատանքային դաստիարակության պահանջները։ Այդ խնդրի իրականացումը հնարավոր էր արդյունաբերական ձեռնարկությունների ստեղծմանը զուգընթաց։ Օրինակ, Լենինականում Մայիսյան ապստամբության անվան տեքստիլ կոմբինատի հենց գործարկման առաջին օրվանից այնտեղ աշխատանքի անցան մի քանի հարյուր որբ աղջիկներ[11]։

---

9 Նույն տեղում, ֆ. 48, ց. 1, գ. 365, թ. 23։

10 Նույն տեղում, գ. 294, թ. 28։

11 «Խորհրդային Հայաստան։ Հինգ տարի (1920—1925)», վիճակագրական ժողովածու, Երևան, 1926 և «ՀՍՍՀ դեկրետների և հրամանների ժողովածու», պրակ 1, Էջմիածին, 1921, էջ 20—26։

ՀԿ(բ)Կ Կենտկոմի և հանրապետության կառավարության ձեռնարկած միջոցառումների նպատակը սոսկ որբերի, անօթևան ու անապաստան անչափահասների ֆիզիկական գոյության ապահովությունը չէր, այլ նաև նրանց հոգևոր վերածնունդը, կուլտուրական ու կրթադաստիարակչական մակարդակի բարձրացումը։ Այսօրինակ միջոցառումը նաև հնարավորություն կստեղծեր, նոր ձևավորվող սոցիալական հարաբերություններին համապատասխան, սոցիալիստական շինարարության համար պատրաստել մասնագետներ, սովետական իշխանությանը նվիրված անձնվեր մարդիկ։ Այս նպատակով տակավին 1921 թ. ապրիլին Հայաստանի հեղափոխական կոմիտեն որոշում էր ընդունել որբանոցների կրթադաստիարակչական գործը հանրապետության լուսժողկոմատին վերապահելու մասին[12]։ Նույն որոշմամբ ինչպես մյուս բոլոր գերատեսչություններին ու կազմակերպություններին, այնպես էլ երկաթուղային վարչությանը կից դպրոցներն ու մանկատունը նույնպես անցնում էին լուսժողկոմատի տրամադրության տակ։ Անհրաժեշտ էր կտրուկ միջոցների ձեռնարկմամբ որոշակիորեն բարելավել երկաթուղային կրթադաստիարակչական մանկական հիմնարկների դրությունը[13]։ Միաժամանակ որոշում[14] էր ընդունվել լուսավորության և արդարադատության ժողկոմատների սիստեմում ստեղծել համապատասխան բաժիններ, որոնք պետք է իրականացնեին մանկական ուղղիչ աշխատանքային հիմնարկների ղեկավարությունը[15]։

1924 թ. սկսած Հայաստանի մի շարք շրջաններում կազմակերպվում են մանկական կոմունաներ, իսկ 1929—1930 թթ.՝ մանկական հիվանդանոցներ, ամբուլատորիաներ ու պոլիկլինիկաներ, որոնք բժշկական ձրի օգնություն են ցույց տալիս արևմտահայ որբերին և մանկական հիմնարկներում տեղավորված անապաստան անչափահասներին[16]։ Մանկական կոմունաներում տեղավորված անչափահասներն աշխատում էին կոմունայի տնտեսությունում, որտեղից ստացված եկամուտները ծախսվում էին նրանց նյութական պայմանների բարելավման նպատակով[17]։ 16 տարին լրացած անչափահասները, կոմունայից ստանալով ձրի հագուստ և կոշիկ, տեղափոխվում էին համապատասխան հիմնարկ-ձեռնարկություն և աշխատանքի անցնում այնտեղ[18]։

Ինչպես կոմունաներին, այնպես էլ պետական մանկատներին ու մանկական դաստիարակչական գաղութներին կից կազմակերպվել էին արտադրամասեր, արհեստանոցներ ու փորձնական հողամասեր։ Դրանց բազայի վրա հետագայում ստեղծվեցին հանրապետության արհեստագործական մի շարք ուսումնարաններ։ Այսպես, օրինակ, 1924 թ. Ալավերդում հիմնված մանկատանը կից կազմակերպվեց մեխանիկական արհեստանոց՝ նկատի ունենալով

---

12 Նույն տեղում։

13 ՀՍՍՀ ՀՀԿՊԱ, ֆ. 122, ց. 1, գ. 76, թ. 35։

14 Նույն տեղում, գ. 145, թ. 2։

15 Հատկապես մեծ դեր են խաղացել արդժողկոմատին կից գործող անչափահասների գործերը քննող և վերահսկող հանձնաժողովները, որոնք վերահսկողություն էին իրականացնում թե՛ միլիցիայի և թե՛ դատարանների վրա։ Դրանք կազմակերպվել էին ՀՍՍՀ ժողկոմխորհի 1921 թ. հուլիսի 3-ի դեկրետի հիման վրա։

16 ՀՍՍՀ ՀՀԿՊԱ, ֆ. 122, ց. 1, գ. 357, թ. 65։

17 Նույն տեղում, գ. 342, թ. 1—2։

18 Հայաստանի մանկական կոմունաները հիմնականում գյուղատնտեսական թեքում ունեին։

պղնձաձուլական կոմբինատի զարգացման հեռանկարները։ 1924 թ. վերջերին Երևանի երկու մանկատներին կից կազմակերպվեցին պոլիգրաֆիական արտադրամասեր, ուր մոտ 200 պատանիներ ու աղջիկներ հաջողությամբ սովորում էին գրաշարություն, մամուլների հանման, տպագրության, կազմարարության մասնագիտություններ[19]։ Դրանցից շատերը հետագայում դարձան իրենց գործի էնտուզիաստներ, հանրապետության պոլիգրաֆիական արտադրության հմուտ մասնագետներ։ Նույն 1924 թ. Անդրերկաթուղու աշխատողների արհմիութենական համագումարը որոշում է ընդունում Լենինականի երկաթուղային հանգույցին կից կազմակերպել պրոֆեսիոնալ-տեխնիկական ուսումնարան՝ Լենինականի և Բաթումի մասնաճյուղերով։ Հանրապետության տնտեսական բնագավառի աշխատողների խորհրդակցության 1925 թ. փետրվարի 20-ի որոշմամբ կազմակերպվում են մանկական գյուղատնտեսական արհեստանոցներ, որոնցում ընդգրկված երեխաները պետք է աշխատեին և ապրեին «ինքնուրույն գոյության միջոցներով՝ առանց պետական մշտական օգնության»[20]։ Այդ որոշման համաձայն Երևանում կազմակերպվում են մեխանիկական, ատաղձագործական և կարի արհեստանոցներ՝ իրենց գավառային մասնաճյուղերով, որոնցում ընդգրկված էին 16—18 տարեկան մոտ 700 երկսեռ որբեր[21]։ Խորհրդակցությունը խնդրագիր-միջնորդագիր է ներկայացնում հանրապետության կառավարությանը՝ այդ նպատակի համար հատկացնելու 30 հազար ռուբլի և շահագրգռելու համապատասխան նախագծային կազմակերպությունների՝ հասարակական հիմունքներով իրականացնելու պրոֆտեխնիկական ուսումնարանների և մանկական հիմնարկների համար կառուցվելիք շենքերի նախագծման աշխատանքները[22]։ Այս ամենը, հասկանալի է, հետապնդում էր մի նպատակ՝ հանրապետության հարյուր-հազարավոր որբ ու անապաստան անչափահասների նյութական կյանքի բարելավման հետ մեկտեղ. բարձր հիմքերի վրա դնել նրանց աշխատանքային և կրթական մասնագիտական կողմնորոշումը, մանկական հիմնարկների սաների պոլիտեխնիկական ուսուցման կարևոր գործը։

1926—1927 թթ. սփյուռքից մայր հայրենիք հայության ներգաղթը հրամայաբար պահանջում էր կրթական օջախների, մանկական հիմնարկների, ինչպես նաև մանկավարժական բնագավառի աշխատողների թվի շեշտակի ավելացում, ուսումնական ձեռնարկների, դասագրքերի հրատարակման և ուսումնագրենական պիտույքների մասսայական արտադրության ընդլայնում։

Հայաստանի կոմկուսի Կենտկոմին և հանրապետության կառավարությանը հավասարապես մտահոգում էին Հյուսիսային Կովկասում, Արմավիրում, Կրասնոդարի երկրամասում, Աստրախանում, Անդրկովկասի և Միջին Ասիայի տարբեր շրջաններում ապաստան գտած հայերի կարիքները, նրանց զավակների ուսման ու դաստիարակության գործի կազմակերպումը։ Այս նպատակով ձեռնարկվեցին մի շարք միջոցառումներ՝ հավաքագրելու Աստրախանի, Ցալթայի, Նովի Աֆոնի, Կերչի, Ղրիմի, Կիսլովոդսկի, Թբիլիսիի, Բաքվի, Աշ-

19 «Խորհրդային Հայաստան։ Հինգ տարի (1920—1925 թթ.)», վիճակագրական ժողովածու, էջ 300—305։

20 ՀՍՍՀ ՀՀԿՊԱ, ֆ. 48, ց. 1, գ. 365, թ. 297։

21 Նույն տեղում։

22 Նույն տեղում։

խաբաղի, Մարիի և հայաշատ այլ վայրերի անապաստան հայ որբուկներին. նրանց տեղավորելու մանկական հիմնարկներում, կազմակերպելու նրանց ուսման, դաստիարակության և մասնագիտական որակավորման գործը։ Կարևոր և առաջնակարգ նշանակություն ունեցող այս խնդիրը հիմնականում իրականացվեց երկու ձևով. Սովետական Հայաստանից դուրս, տարբեր վայրերում ապաստանած որբերի մի մասը տեղափոխվեց հանրապետության մանկական հիմնարկները՝ մանկատներն ու աշխատանքային դաստիարակչական գաղութները, իսկ մի մասի համար հենց տեղում՝ նշված վայրերում կազմակերպվում են մանկական հիմնարկներ։ Այսպես, օրինակ, 1922 թ. Կիսլովոդսկում ապաստանած մի քանի հարյուր հայ որբերի համար կազմակերպվում է մանկատուն, ուր սկզբնական շրջանում տեղավորվում են 4—14 տարեկան մոտ 200 որբեր[23]։

1922 թ. մարտի 27-ի № 1456 գրությամբ Վրաստանի՝ Թուրքիայից գաղթած և մերձսևծովյան շրջաններում ապաստանած հայերի գործերի կառավարչությունը Հայաստանի կոմկուսի Կենտկոմին խնդրում է հոգալու Կիսլովոդսկի մանկատան կարիքները՝ այնտեղ դործուղելով մանկավարժ-դաստիարակներ կամ էլ հնարավորության դեպքում այդ մանկատունը տեղափոխելու Հայաստան։ Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմը և կառավարությունը միջոցներ են տրամադրում ինչպես Կիսլովոդսկի 2-րդ հայկական մանկատունը, այնպես էլ Պյատիգորսկում և Աստրախանում հավաքագրված որբ ու անապաստան հայ երեխաներին Սովետական Հայաստան տեղափոխելու համար։

Մեծ թվով գաղթահայեր ապաստան էին գտել նաև Ղրիմում, ուր լուսժողկոմատի տեղական օրգանների հոգատար վերաբերմունքի շնորհիվ հավաքագրվել էին մի քանի հարյուր որբ երեխաներ և տեղավորվել մանկատներում ու մանկական բնույթի այլ հիմնարկներում։ Ճիշտ է, այստեղ հնարավորին չափ նյութական բավարար պայմաններ էին ստեղծված անչափահաս որբերի համար, սակայն ընդհանուր առմամբ մանկատունը կանգնած էր լուրջ դժվարությունների առաջ. չկային դասագրքեր, ծրագրեր, ուսումնական պլաններ, սակավ էր մանկավարժական կադրերի թիվը։ Սովետական Հայաստանի կառավարությունը 1922 թ. աշնանը, որպես օգնություն, Ղրիմի հայկական մանկատան համար ուղարկում է հազար ռուբլի (ոսկով), ինչպես նաև դասագրքեր, ուսումնա-օժանդակ ձեռնարկներ, գրենական պիտույքներ[24]։ Դա, ինչպես գրում է Ղրիմի լուսժողկոմի այն ժամանակվա տեղակալ Գ. Մուխտիդինովը, իր տարաբախտ ժողովրդի անօթևան մնացած զավակների նկատմամբ Սովետական Հայաստանի կառավարության և բոլշևիկների կուսակցության հոգատար վերաբերմունքի վառ ու անկեղծ արտահայտությունն էր[25]։

Հաշվի առնելով առաջին համաշխարհային պատերազմից և քաղաքացիական կռիվներից հետո երկրում ստեղծված լուրջ դժվարությունները և անչափահասների անապաստանության իսպառ վերացման խնդրի կարևորու-

23 Նույն տեղում, ֆ. 122, ց. 1, գ. 76, թ. 60։

24 Նույն տեղում։ Ի դեպ, ինչպես նշված է որոշման մեջ, լուսժողկոմատի սուղ միջոցների պատճառով այդ մանկատան և, առհասարակ, Ղրիմի անապաստան երեխաներին Հայաստան տեղափոխելու ծախսերը հանրապետության ժողկոմխորհը վերցնում է իր վրա։

25 Նույն տեղում, գ. 112, թ. 1։

թյունը, ինչպես նաև նրանց կրթության գործի կազմակերպման տակավին ոչ բավարար մակարդակը, 1923 թ. դեկտեմբերի 5-ին հրավիրվում է միութենական և ինքնավար հանրապետությունների լուսժողկոմատների պատասխանատու աշխատողների խորհրդակցություն՝ նվիրված անչափահասների և անապաստան որբերի հսկողության, նրանց ուսման ու դաստիարակության գործի բարելավմանը[26],

Խորհրդակցությունը որոշում է.

ա) սահմանափակել մեկ միութենական կամ ինքնավար հանրապետությունից մյուս հանրապետությունը անչափահաս պատանիների ու աղջիկների ռեէվակուացիան (վերադարձը) իրենց նախկին կամ ցանկացած բնակավայրը. մասնակի վերադարձ թույլատրել ծայրահեղ դեպքում՝ համառուսաստանյան 4-րդ համագումարի որոշման համապատասխան,

բ) նպատակահարմար գտնել առանձին միութենական և ինքնավար հանրապետությունների կենտրոնական մանկական հանձնաժողովների և հիմնարկների (մանկատներ, գաղութներ, կոմունաներ և այլն) աշխատանքների կոորդինացումն ու փորձի փոխանակումը,

գ) անհրաժեշտ և անհետաձգելի համարել միութենական ու ինքնավար հանրապետությունների մանկական հիմնարկների աշխատողների խորհրդակցության հրավիրումը,

դ) խորհրդակցության ներկայացուցչական կազմը պետք է որոշվի տեղերում՝ լուսժողկոմատների կողմից,

ե) խորհրդակցության օրակարգում քննարկվելիք հարցերի կարևորությունն ու նպատակահարմարությունը թողնել լուսժողկոմատի և ՀԱՄԿԽ-ի մանկական հիմնարկների բաժինների հայեցողությանը,

զ) խնդրել միութենական և ինքնավար հանրապետությունների լուսժողկոմատներին՝ ներկայացնելու գրավոր կարծիք մանկական հանձնաժողովների համամիութենական միավորման (կոորդինացման) ձևերի ու հնարավորությունների մասին,

է) հանձնարարել ՌՍՖՍՀ մանկական հանձնաժողովի գլխավոր խորհրդին՝ միջնորդել ՀԱՄԿԽ-ի առաջ՝ հրավիրելու անչափահաս անապաստան ու անխնամ երեխաների ուսման ու դաստիարակության, նյութական ապահովության ու խնամակալության հարցերին նվիրված հերթական համագումար,

ը) խնդրել միութենական և ինքնավար հանրապետությունների տեղական կոմերիտական կազմակերպություններին՝ բոլոր ձևերով ու միջոցներով պայքար մղելու անապաստանության դեմ, օգնելու մանկատների և դաստիարակչական ուղղիչ-աշխատանքային գաղութների վարչություններին՝ ավելի նպատակասլաց դարձնելու անչափահասների շրջանում տարվող աշխատանքները[27],

Ի կատարումն 1923 թ. դեկտեմբերի 5-ին հրավիրված խորհրդակցության որոշումների, ինչպես նաև մանկատներում երեխաների կենցաղային պայմանները, ուսման ու դաստիարակության գործը բարելավելու և համամիութենական խորհրդակցությանը նախապատրաստվելու նպատակով 1923 թ.

---

26 ՀՍՍՀ ՀՀԿՊԱ, ֆ. 122, ց. 1, գ. 112, թ. 174,

27 Նույն տեղում, գ. 328, թ. 10.

դեկտեմբերի 25-ին Երևանի գավլուսբաժնի սոցիալական դաստիարակության բաժինը հրավիրում է մայրաքաղաքի որբանոցների, մանկատների և սննդկայանների աշխատողների միացյալ խորհրդակցություն, որտեղ քննարկվում են կրթադաստիարակչական գործի վիճակը Երևանի արտադպրոցական մանկական հիմնարկներում և դրա բարելավման ուղիները, մանկատների և արտադպրոցական մանկական մյուս հիմնարկների միացյալ խորհուրդ ստեղծելու, մանկատներում անչափահասների սննդի վիճակը բարելավելու և այլ հարցեր[28]։ Խորհրդակցությունում, որպես հարակից հարց, քննարկվում է նաև Հայաստանում ապրող այլազգիների համար արտադպրոցական մանկական հիմնարկներ և դպրոցներ բացելու, ինչպես նաև դրանք դասագրքերով, օժանդակ գրականությամբ, ուսումնական պլաններով ու ծրագրերով ապահովելու խնդիրը։ Քննարկված հարցերի առթիվ ընդունվում են համապատասխան որոշումներ[29]։

Այլազգի երեխաների մասին ընդունված որոշումը ուղարկվում է Հայաստանի կոմկուսի Կենտկոմ. վերջինիս 1924 թ. մայիսի 3-ի № 1699 գրության մեջ ասված էր, որ Իջևանի և Ղազախ-Շամշադինի շրջանների մուսուլմանական անկուսակցական գյուղացիության առաջին կոնֆերանսի պատգամավորների խնդրանքը հարգված է և հանձնարարված է լուսավորության և սոցիալական ապահովության ժողկոմատներին՝ Իջևանում շրջանի և հարևան գյուղերի այլազգիների անապաստան անչափահասների համար բացել մանկատուն[30]։ Բացի այդ, լուսժողկոմատի և սոցիալական ապահովության ժողկոմատի 1923 թ. մարտի 24—26-ը տեղի ունեցած միացյալ կոլեգիայի ընդլայնված նիստում որոշում է ընդունվում Հայաստանի մուսուլմանական դպրոցների համար ուսումնական ձեռնարկներ և օժանդակ գրականություն հրատարակելու մասին[31]։

1923 թ. հոկտեմբերի 16-ին հանրապետության լուսժողկոմ Ա. Մռավյանի նախաձեռնությամբ որոշում է ընդունվում հավաքագրված 17 եզդի անապաստան երեխաներին տեղավորել Ալագյազի մանկատանը, որտեղ այդ խմբի ուսուցումը պետք է տարվեր մայրենի լեզվով[32]։

Ինչպես ասացինք, որոշվել էր բացի Երևանից, Լենինականից և Էջմիածնից նոր մանկատներ կազմակերպել գերազանցապես գավառներում[33]։ 1924 թ. սկսած, Երևանից և Էջմիածնից բացի մանկատներ են բացվում Զվարթնոցում, Օշականում, Թաքիայում (Բազմաղբյուր)՝ Աշտարակի շրջանում, Ղամարլուում, Ջոհրաբլուում, Դվինում և Ներքին Աղբաշում (Արտաշատի շրջան), Նոր Բայազետում և Գորիսում։ Մանկատներից բացի Երևանում գործում էին պատկոմական շտաբ, կենտրոնական արհեստանոց-դպրոցը և այլ հիմնարկներ[34]։ Բոլոր մեծ որբանոց-մանկատներին կից գործում էին դպրոցներ։ 1924—1926 թթ. գրեթե բոլոր մանկատներին կից բացվում են դպրոցներ։

28 Նույն տեղում, գ. 179, թ. 31—32։

29 Նույն տեղում։

30 Նույն տեղում։

31 Նույն տեղում, գ. 123, թ. 19։

32 Նույն տեղում, գ. 294, թ. 28։

33 1924 թ. Հայաստանում գործում էին 19 պետական մանկատներ, որ՝ցից 9-ը՝ Երևանում, իսկ 10-ը Էջմիածնի գավառում (նույն տեղում)։

34 Նույն տեղում, գ. 102, թ. 182—183։

1920-ական թվականներին կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության ձեռնարկած հետևողական միջոցառումները և լուսավորության բնագավառի աշխատողների հոգատար վերաբերմունքը մեծապես նպաստեցին հարյուր-հազարավոր որբերի ու անօթևան անչափահասների ֆիզիկական փրկության, ուսումնառության և մասնագիտական որակավորման համապետական խոշոր կարևորություն ունեցող գործի իրականացմանը։ Երբեմնի անօթևան ու անապաստան որբերը սովետական իշխանության հոգաարության շնորհիվ փրկվեցին կործանումից, սովի ու համաճարակի ճրաններից, դարձան մեր հանրապետության լիարժեք քաղաքացիներ, իրենց արժանի մասնակցությունը բերելով Սովետական Հայաստանի տնտեսական ու կուլտուրական վերաշինության գործին։

ПЕРВЫЕ МЕРОПРИЯТИЯ СОВЕТСКОЙ ВЛАСТИ ПО УХОДУ И ВОСПИТАНИЮ АРМЯНСКИХ СИРОТ И БЕСПРИЗОРНЫХ

ЭДУАРД ВАРТАНЯН

Резюме

В результате геноцида западных армян, организованного правительством младотурок в годы первой мировой войны, сотни тысяч армянских детей оказались в положении беспризорных и круглых сирот. Значительная часть их нашла пристанище на территории Восточной Армении, Закавказья и Советской России. Сохранившиеся архивные материалы показывают ту бескорыстную помощь, которую оказывали армянским сиротам Советская Россия и лично В. И. Ленин.

В самой Советской Армении, а также в Закавказье и на территории Советской России имелись значительные накопления армянских беженцев. Здесь в 1920-ых годах были открыты детские учреждения, где армянские сироты и беспризорные нашли не только физическое спасение, но и получили профессиональное и общеобразовательное воспитание.